կում չեմ եղել, բայց խմբագրութեան յայտնի է, որ այդտեղից այս տարի շատերը ինքնին յետ են ուղարկել թերթը, յայտնելով որ չեն համակրում։

Լրագրական ամեն մի յօդուածից հասկացվում է թէ ինչ հոգով է գրված։ Գրականական նախադասութիւնների մուրացկանութիւնը, անձնական նեղ հայհոյանքներով լի պոլեմիկան, պակասութիւններ շողոքորթող, ձեւի համար գրվածները անհոգի են լինում միշտ եւ անկարող համակրութիւն ստեղծելու։

Իմ շնորհակալութիւնս եմ յայտնում մեծ. ունկնդիրներին, որոնք այս երկրորդ անգամն է որ պատվում են ինձ իւրեանց ներկայութեամբ, մասնաւորապէս «Մշակի» մեծ. խմբագրին, որ միշտ քաջալերել եւ խրախուսել է, որի թատրոնի ձրի մուտքը միշտ բաց է եղել ինձ համար, նոյնպէս շնորհակալութիւնս եմ յայտնում մեծ. գնդապետ Ալէքսանդր Թումանեան Մելիք-Հայկազեանին, որի ծախսով տպագրվեց «Հայրենիքի պահանջներ» եւ որին ներկայ աշխատութիւնս նուիրելու պատիւն ունիմ։